



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotszor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11-Ը ՀՈՒՆԻՄԻ 2020 թվականի N 113 Ա

**ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՂԹԱՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով

որոշում եմ՝

Եղեգիս համայնքի Գողթանիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող հետևյալ հողերը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն՝

- գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-018-0146- , մակերեսը՝ 2,11586հա,
- գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-018-0127- , մակերեսը՝ 0,35993հա,
- գյուղատնտեսական և ջրային նշանակության 2.11586հա մակերեսով հողամասը՝ այլ հողատեսք, մակերեսը՝ 1,4026հա, խոտհարք, մակերեսը՝ 0,47256հա, ջրային, մակերեսը՝ 0,0366հա, ջրային, մակերեսը՝ 0,0147հա, վարելահող, մակերեսը՝ 0,1894հա, կադաստրային ծածկագրեր՝ 10-018-0148, 0550, 0105, 0506, 0123, 0503, 0120, 0502, 0119, 0548:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12-Ը ՀՈՒՆԻՄԻ 2020 թվականի N 114 Ա

**ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԻ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 23-ը հուլիսի 2015 թվականի N828-Ն որոշման դրույթները, Վայոց ձորի մարզպետի 12/06/2020 թվականի N01/07.2/3742-2020 գրությունը և ղեկավարվելով <<Հողային օրենսգրքի>> 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով

որոշում եմ՝

Եղեգիս համայնքի Եղեգիս բնակավայրի վարչական տարածքի փողոց 5, թիվ 8 հասցեում գտնվող <<Ֆուլեր տնաշինական կենտրոն>> բարեգործական ՀԿ-ի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի /վկայական՝ N26122019-10-0004, կադաստրային ծածկագիր՝ 10-021-0025-0032, մակերեսը՝ 0,14907հա/ գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ